ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի 5-րդ փողոցը (սկսվում է Երևանի Ա.Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոցից հասնում հ.46 հասցեի հարակից տարածք), անվանակոչել ազատամարտիկ, ռազմական գործիչ Աշոտ Մանուկյանի անվամբ՝ «Աշոտ Մանուկյան» փողոց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՏԱԿ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՄՀԵՐ ԲԵՋԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԳՈՀԱՐ ԲԱԼԴՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ՂԱՐԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշոտ Ռուբենի Մանուկյանը ծնվել է 1958թ.-ի Սեպտեմբերի 21-ին՝ Երևանում, ծառայողի ընտանիքում: Մեծանալով Մանուկյանների մեծ գերդաստանում՝ շրջապատված հոգատարությամբ, դեռ մանուկ հասակից օժտված էր առաջնորդի հատկանիշներով, որը հետագայում փայլուն դրսևորվեց Արցախյան ազատամարտի տարիներին:

1965-1975թթ.-ին սովորել է Երևանի թիվ 93 միջնակարգ դպրոցում:

1981-1986թթ.-ին սովորել է Կիևում՝ Կեմերովոյի սննդաարդյունաբերկան ինստիտուտում:

Ստացել է ինժեներ-տեխնոլոգի մասնագիտություն: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1980թ.-ից, «Ալգորիթմ» գիտաարտադրական միավորումում:

1982թ.-ին աշխատել է «Աէրոֆլոտ» կազմակերպությունում:

1984թ.-ին աշխատել է «ՀՍՍՀ թեթև արդյունաբերության նախարարության դեկորատիվ գործարանում»:

1985-1987թթ.-ին աշխատել է «Հայառողջշինվերանորոգում» տրեստում, որպես բրիգադիր:

1988-1990թթ.-ին աշխատել է «Արսեն 7» կոոպերատիվում, որպես տնօրեն:

1990-1994թթ.-ին աշխատել է 3-րդ «Հաց» արտադրական միավորումում, որպես գլխավոր տնօրեն:

1990թ.-ի հունվարին ընտրվել է «Սասունցի Դավիթ» աշխարհազորային ջոկատի հրամանատար և մինչև 1994թ.-ը մասնակցել է Արցախյան ազատամարտին:

1990թ.-ին ընտրվել է ՀՀ Երևանի Մաշտոցի շրջանի շրջխորհրդի պատգամավոր:

1995թ.-ի հոկտեմբերի 25-ին, դպրոցը, որտեղ սովորել էր Աշոտ Մանուկյանը անվանակոչվեց հրամանատարի անունով: Այստեղ է գտնվում Աշոտ Մանուկյանի կյանքին և անցած մարտական ուղղուն նվիրված թանգարանը: Դպրոցի բակում տեղադրված է հրամանատարի կիսանդրին: Դավթաշեն համայնքում՝ «Յուրի Երզնկյան» փողոցում, որտեղ ապրել է Աշոտ Մանուկյանը, գտնվում է նրան նվիրված աղբյուր-հուշարձան: Ամուսնացած էր, ունի 3 զավակ: 1994թ.-ի փետրվարի 3-ին կյանքից վաղաժամ հեռացավ Աշոտ Մանուկյանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ